ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 2.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

N07/16/3833-15
20.07.15թ.

Ձեր № 253-ի 3
Առ 09.07.15թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հայրապետյան

Ի պատասխան Ձեր վերոնշյալ գրության տեղեկացնում ենք, որ Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև 2011թ. դեկտեմբերի 23-ին ստորագրվել է Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետությանը զարգացման օժանդակություն տրամադրելու մասին Փոխըմբռնման Հուշագիր: ԻԻՀ կառավարությունը համաձայնել է հուշագրի շրջանակներում տրամադրել 2 մլն ԱՄՆ դոլար, որպես դրամաշնորհ, Հայաստանի Հանրապետությունում՝ Իրանի հետ սահմանամերձ բնակավայրերի (Մեղրի և Ագարակ համայնքների) գազի բաշխման ցանցի կառուցման ծրագրի իրականացման համար: Հուշագրի համաձայն՝ հայկական կողմն իր վրա է վերցրել Հուշագրի շրջանակներում տրամադրվող միջոցների հաշվին ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման և ապրանքների ներմուծման գործարքներից գանձվող հարկերի, մաքսատուրքերի և այլ պարտադիր վճարների հետ կապված ծախսերը:

Ծրագրի գլխավոր կապալառուն իրանական «Սաներջի» ընկերությունն է: 2013թ.-ին ավարտվել են նախագծման աշխատանքները և իրականացվել են որոշ սարքավորումների ու նյութերի մատակարարումները:

2013-2014թթ. ՀՀ-ում ԻԻՀ դեսպանություն է ներկայացվել մատակարարումների հետ կապված վճարման 5 հանձնարարագիր: Սակայն կանխավճարից բացի որևէ այլ վճարում չի իրականացվել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասություններից դուրս գտնվող խնդիրների պատճառով իրանական կողմից ծրագրի ֆինանսավորումը կասեցնելու պատճառով:

Տեղեկացնում ենք նաև, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը տրամադրված դրամաշնորհները՝ ըստ տարիների և գումարների, արտացոլված են համապատասխանաբար տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի հավելվածներում՝ «Վառելիք և էներգետիկա» բաժնում:

Հարգանքով՝ ԿԱՐԵՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կատարող՝ Լ.Անանյան
Հեռ.՝ 011528848